

## Ի. Ի. ՇՈՊԵՆԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՐՅԻ ՇՈՒՐՁԸ

### Հ. Ժ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Արևելյան Հայաստանի միացումից հետո ռուսական կառավարությունը ձեռնարկեց Հայկական մարզի պատմության, նրանում բնակվող ժողովուրդների հասարակական-կենցաղային պայմանների, սովորությունների ուսումնասիրությունը, որոնք լինելով պետական բարձրաստիճան պաշտոնյաների հանձնարարություններ, ըստ էության ունեին քաղաքական որոշակի միտվածություն, իսկ երբեմն՝ շեշտված միտումնավորություն: Այնուհանդերձ, դրանք ունեն ոչ միայն պատմագիտական, այլև հայագիտական նշանակություն: Այսպիսի աշխատությունների թվին ոչ մեծ վերապահումներով կարելի է դասել Ի. Ի. Շոպենի «Պատմական հուշարձան Հայկական մարզի կացության մասին» այն Ռուսական կայսրությանը միացնելու ժամանակաշրջանում» աշխատությունը: Գիրքը լույս է տեսել Ս. Պետերբուրգում 1852 թ. և արժանացել Դեմիտրովյան մրցանակի:

Ուսումնասիրությունը առաջին հերթին ժառանգական աշխատանքի արդյունք է. երկար տարիներ Ի. Շոպենը ղեկավարել է Հայկական մարզի եկամուտների և պետական ունեցվածքի վարչությունը: Գիրքը միաժամանակ նաև պատվերի արդյունք է. Շոպենը ներածականում հայտնում է, որ Հայկական մարզի նկարագրությունն իրեն հանձնարարել է գրել կոմս Ի. Պասկևիչը 1829 թ. սկզբներին, և պետք է կրեր «Գործառական նկարագրություն» վերնագիրը: Սակայն հեղինակն ավելի հեռուն է գնացել. «Ամենից առաջ, - գրում է Ի. Շոպենը, - ես պետք է բազմազան տեղեկություններ հավաքեի այդ երկրի և նրանում բնակվող ժողովուրդների մասին: Ուստի անհրաժեշտություն առաջացավ դիմելու այն գործերին, որոնք տեղեկություններ էին պարունակում Հին Հայաստանի մասին... համառոտն փնտրելով, բարձրանելով և գրանցելով այն ամենը, ինչը գտել եմ նրանց էջերում, չխնայելով և ոչ մի միջոց՝ Փարիզի, Պետերբուրգի և Մոսկվայի գրադարաններում քաղվածքներ հանելու համար»<sup>1</sup>: Աշխատանքի շարադրման ընթացքում Ի. Շոպենն օգտվել է բազմաթիվ աղբյուրներից՝ հունա-հռոմեական պատմիչներից սկսած մինչև իր ժամանակի հրատարակությունները: Հեղինակը նշում է, որ ինքը լայնորեն օգտվել է նաև հայկական աղբյուրներից՝ պատմիչներից սկսած մինչև Ինժինյան և Չամչյան: Ի. Շոպենն առատորեն քաղվածքներ է կատարել նաև Հայաստանի պատմությանը վերաբերող ժամանակի պարբերական մամուլի հրատարակումներից և այս ամենից հետո միայն ձեռնամուխ եղել գրքի շարադրմանը:

Հայագիտության մեջ Ի. Շոպենի աշխատությունը բազմիցս քննարկվել և ամենատարբեր առումներով ենթարկվել է հայեցակետային քննադատության: Պրոֆ. Ջ. Գրիգորյանն, օրինակ, այդ առիթով գրում է. «... նախահեղափոխական շրջանի ռուսական պաշտոնական պատմագիտության ներկայացուցիչները (այդ թվում նաև՝ Ի. Շոպենը - Հ. Հ.) Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացման պատմության մասին ոչ միայն չեն տեղիծել շատ թե քիչ ամբողջական գործեր, այլև այդ հարցում նրանք զարգացրել են մեծապետական մի կոնցեպցիա, որը երկար ժամանակ՝ խոչընդոտում էր օրյակտիվ գնահատելու Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացման պատմական երևույթը և ըստ արժանվույն պատշաճին արժեքավորել նրա հետևանքներն ու հայ ժողովրդի կյանքում ունեցած նշանակությունը»<sup>2</sup>: Բայց որքան էլ տաքակուսելի է, հեղինակն այդպիսի հավակնություն չի ունեցել: Իր գրքի հրատարակության առիթով Շոպենն ինքն է գրում, թե «այսպիսի թեմայի կատարելության համար անհրաժեշտ էր

<sup>1</sup> Шен И. И. Шопен, Исторический памятник состояния Армянской области в эпоху ее присоединения к Российской империи, СПб, 1852, т. 1: Այստեղևս այս գրքից թրված մեջբերումների հղումները տես շարադրանքում:

<sup>2</sup> Ջ. Գրիգորյան, Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին և նրա պատմական մեծ նշանակությունը, Երևան, 1978, էջ 12:

խորանալ տարեգրությունների և աղբյուրների մեջ, որն, անշուշտ, վեր էր ին ուժերից...»<sup>3</sup>: Հիմա գլխավոր ընդգծումը. «Ընթերցողի դատին հանձնելով այս «Պատմական հուշարձանը...», - շարունակում է Շուպենը,- ես նույնիսկ ավելորդ եմ համարում տեղեկացնել ընթերցողին, որ նա այս գիրքը *չպետք է դիտի որպես գիտնականի աշխատանք* (ընդգծումը մերն է - Հ. Հ.): Այն փաստորեն վարչական պաշտոնյայի գործ է, որը ջանացել է հնարավորին չափօճշտությամբ, մանրամասն և ջանասիրությամբ կատարել ղեկավարության՝ իր վրա դրված պարտականությունը: Ուստի այս գործը գիտնականների համար չէ, այլ Հայաստանի մասին անհրաժեշտ տեղեկությունների յուրառեսակ հանրագիտարան, որը կօգնի այնտեղ ծառայության մեկնած զինվորական և քաղաքական պաշտոնյաներին, ճանապարհորդներին...» (էջ V):

Ուստի միանշանակ պետք է ընդգծել, որ Ի. Շուպենի գիրքը հատուկ պատմագիտական գործ չէ, ինչպես այն ներկայացված է մեզանում: Կարիք չկա նաև Ի. Շուպենի երկերը քննարկել հայեցակետային տեսանկյունից, առավել ևս նրան համարել ռուսական պաշտոնական պատմագիտության ներկայացուցիչ: Ուշագրավ է, որ նույն տեսակետը ժամանակին հայտնել է նաև ռուսական մամուլը: Այսպես, «Кавказ»<sup>4</sup> քերթում Շուպենի գրքի մասին գեներալ-գրախոսականում կարդում ենք. «Նրա գիրքը ամբողջությամբ հավանության չի արժանացել գիտնականների կողմից (գիրքը գրախոսել էին ակադ. Կեպպենը և Մ. Բրոսսեն - Հ. Հ.): Իհարկե, - շարունակվում է այնուհետև գրախոսականում,- հեղինակից կատարելություն սպասել ևս տեղին չէ, քանի որ ինքը՝ Շուպենը, գրքի ներածականում այդ մասին տեղեկացնում է»<sup>5</sup>: Մեր պատմաբաններին փաստորեն հրապարակել է վերնագրի «Պատմական հուշարձան» ձևակերպումը, իսկ ահա նույն քերթի հավաստումով Շուպենը մտադիր է եղել գիրքը հրատարակել «Հայկական մարզի վիճակագրական տեղեկություններ» վերնագրով, սակայն իրենից անկախ շատ հանգամանքներ ստիպել են նրան հետաձգել հրատարակումը մինչև 1852 թվականը: Հերմագիթը արդեն չի համապատասխանել բովանդակությանը, ուստի Շուպենը հարմար է գտել հրատարակել իր հնացած վիճակագրությունը պատմական հուշարձան խորագրի տակ<sup>6</sup>: Ինչպես նկատում ենք, գրախոսականը համոզել է:

Ի. Շուպենի այս ուսումնասիրությունը ծավալուն է և փաստառատ: Առաջին գլխում, որ կրում է «Մեծ Հայքի աշխարհագրության համառոտ նկարագիրը» խորագիրը, հեղինակը ներկայացնում է Մեծ Հայքի սահմաններն ու լեռները, գետերն ու լճերը, անդրադառնում նրա վարչական քաղաքական, տեղեկություններ է հաղորդում այնտեղ բնակվող ժողովուրդների մասին: Ի. Շուպենն առանձին-առանձին քննարկում և ներկայացնում է նաև Մեծ Հայքի նահանգներն ու գավառները:

Աշխատությունում մի առանձին գլուխ նվիրված է Մեծ Հայքի պատմության համառոտ ուրվագծերին: Իր հայեցողությամբ Ի. Շուպենը Հայաստանի հին և միջին դարերի պատմությունը շրջաբաժանում է ինը ժամանակահատվածների: Օրինակ, վերջին՝ իններորդ ժամանակաշրջանը, ըստ Ի. Շուպենի, ընդգրկում է գերագանցապես մոնղոլական տիրապետության շրջանը (1220-1500 թթ.): Ընդհանրապես, հեղինակը յուրաքանչյուր ժամանակահատվածի սահման է ընդունել օտար նվաճողների արշավանքներն ու նրանց տիրապետությունը Հայաստանում: Նշենք նաև, որ Հին Հայաստանի պատմությունը ներկայացնելիս հեղինակը գլխավորապես հիմք է ընդունել Մովսես Խորենացու ժամանակագրությունը: Չխորանալով Ի. Շուպենի շարադրանքի մանրամասների մեջ (իսկ դրա կարիքը, իրոք, չկա, քանի որ հեղինակը փաստորեն մշակել է Խորենացու գիրքը՝ հայագիտական առումով, սակայն, որոշ հետաքրքրություն են ներկայացնում տողատակում արված բացատրությունները: Դրանցից պարզ է դառնում, որ Ի. Շուպենն իր ձեռքի տակ եղած ոչ բոլոր նյութերն ու տեղեկություններն էլ արժանահավատ համարել է հեղինակը շատ հաճախ վիճարկում և քննում է դրանք: Այսպես, 102-րդ էջի տողատակում Ի. Շուպենը գրում է. «Չարմանալի է, որ Դիողոր Միցիլիացից մանրամասն նկարագրելով Սարդարանապալի անկման մասին պահպանված ավանդությունը, չի հիշատակում այդ իրադարձությանը Հայկի մասնակցության մասին»: Պատմական իրադարձությունները նկարագրելիս, սակայն, Ի. Շուպենը հաճախ բուլ է տալիս բազում սխալներ ու վրիպումներ: Սակայն քննելով հայ մշակութային վկայաբեղող հարցերը՝ հեղինակը գոհունակությամբ ընդգծում է, որ «ամենից սուրբ և ամենից անձեռնմխելի ժառանգությունը, որ բողոքում են հայերն իրենց սերունդներին, մայրենի լեզուն է: Բոլոր ազգերից միայն հայերը կարողացան հազարամյակների խորքից՝ Նոյից սկսած մինչև մեր օրերը, փոխանցել և պահպանել ամբողջականության մեջ այդ քանակազին պատգամը» (էջ 180): Հեղինակը հատուկ ընդգծում է նաև հայերի՝ գիտելիքների հանդեպ

<sup>3</sup> И. И. Шопен, *судл. аշխ.*, էջ IV:

<sup>4</sup> «Кавказ», 1853, N 10, с. 43.

<sup>5</sup> Տես նույն տեղը, էջ 43:

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 10:

ունեցած մեծ սերը. «ճրանք ամենուր իրենց հնարավորության սահմաններում նպաստում են լուսավորության և գիտության զարգացմանը և ճրանք, ովքեր ժամանակին չեն կարողանում կրթություն տառնալ, միջոցներ չեն խնայում իրենց երեխաների կրթության համար» (էջ 207)- գրում է Ի. Շուպենը:

Ի. Շուպենը, ամոքադատեալով հայ պատմիչների գործերին, նշում է, որ չնայած հայ պատմագրությունն իր նշանակությամբ և կարևորությամբ զիջում է արաբական, պարսկական և մյուս երկրների պատմագրությանը, սակայն «ճրա նվաճումները մշտապես համահունչ են եղել դարի ոգուն և ազգի ունակություններին... Հայ պատմիչներն ի հատուցումն այս բերության,- շարունակում է Շուպենը,- մշտապես տիրապետել են գնահատելի արժանիքների՝ զուգակցել համեստությունը գիտելիքների հետ, և շափից ավելի տեղի չեն տվել իրենց սեփական երևակայությանը: Հայ պատմիչներից և ոչ մեկը, ապշեցուցիչ նորություններով հանդերձ, երբեք չի ձգտել փայլել տարօրինակ և փտանգավոր մտքերով... ընդհակառակը՝ նրանց գործերը շնչում են մաքուր բարոյախոսությամբ և քարոզության կոչ են անում» (էջ 182): Ի. Շուպենը հայ պատմիչներին բարձր է գնահատում նաև այն բանի համար, որ նրանք «մեծ մասամբ ակամատեսի և ժամանակակցի աչքերով են ներկայացնում իրադարձությունները ու հավաստիության առումով փոստախոսում են ներշնչում» (էջ 182): Հեղինակը միաժամանակ նկատում է, որ հայ պատմիչների գործերում տիրապետում է իրադարձությունների կրճակական մեկնաբանությունը: Ի. Շուպենը նշում է հայ պատմիչների մեկ այլ դրական դրսևորում ևս. «Հայ պատմիչների օգնությամբ,- գրում է նա,- հայագետները լրացնում և հարստացնում են հի՞ն և միջին դարերի պատմական իրադարձությունները» (էջ 185): Հեղինակը ճշմարտացի է նաև, երբ գտնում է, որ «այդ աշխատանքը դեռևս սկզբնական փուլում է միայն և պատմական փաստաթղթերի ընդերքում հայագիտության հետագա խորացումը կառուցապատելի մեր գիտելիքները» (էջ 185): Համաձայնեմք, որ այս բաժնի եզրահանգումներում Ի. Շուպենն, անշուշտ, վեր է կանգնած պետական պաշտոնյայի իր աստիճանից և հայ պատմագիտությանը նվիրված բաժինն ավարտում է հայ պատմիչ-պատմաբանների ներկայացումով՝ սկզբում այբերնակսն, իսկ հետո նաև ժամանակագրական կարգով: Իսկ ավարտելուց առաջ Ի. Շուպենը կատարում է հետևյալ պնդումը. «Հայ պատմագրության առթիվ հարց է ծագում. ինչի՞ց է, որ հայոց նշանավոր լեզուն, որը հարուստ է իր ինքնատիպ գրականությամբ, լեզու, որն այդքան մեծ դեր է խաղացել պատմության մեջ, ինչպես կարող էր գիտական աշխարհում մնալ համընդհանուր մտացության մեջ՝ մինչև 1819 թ. Փարիզում Սեն-Մարտենի գրքի հանդես գալը: Որտեղի՞ց էք գալիս եվրոպացի արևելագետների կողմից այդ անտարբերությունը, հատկապես եթե նկատի ունենանք, որ արևելքի հին ժողովուրդներից հայերն ամենից անուր հաստատվեցին Եվրոպայում...» (էջ 208): Ի. Շուպենն, իհարկե, փորձում է պատասխանել առաջադրված հարցին. «Դասագրքերի բացակայությամբ հազիվ թե կարելի լինի բացատրել այդ բացը,- գրում է նա:- Հավանաբար դրանում բացասական ազդեցություն է գործել ամենից առաջ գրաբարյան գրքային լեզուն, որն էպես տարբերվում է ժողովրդի խոսակցական լեզվից» (էջ 208): Բայց էականը դա չէ. ավարտելով իր խոսքը՝ Ի. Շուպենը համզովում է հայտնում, որ հայագիտությունը լուրջ ուշադրության կարժանանա նաև Ռուսաստանում. «Այժմ Եվրոպան ջանասիրաբար ձգտում է արժանին հատուցել անցյալի հարցում: Շատ համալսարաններին կից բացված են հայագիտական ամբիոններ, հայ պատմիչներն արագորեն քարզանվում ու տարածվում են, և պետք է հուսալ, որ շուտով օռտակական կառավարության հովանավորությամբ այդ դասական լեզուն իր արժանի տեղը կգրավի Արևելքի մյուս լեզուների շարքում» (էջ 208):

Ի. Շուպենի աշխատության մանրամասն հետազոտությունը, սակայն, մեզ բերում է նաև այն համոզման, որ հեղինակի այս ուսումնասիրությունը գիտական խստագույն քննադատության չի դիմանում: Նրա շատ մաքեր ու եզրակացություններ մտացածին ու անընդունելի են: Դա նախ և առաջ վերաբերում է աղբյուրներին: Ի. Շուպենն իր օգտագործած աղբյուրների հետ վարվել է կամայականորեն և դրանք մեջ է բերել առանց անհրաժեշտ վերլուծության: Անընդունելի են նաև, հեղինակի բերած ծանոթագրություն-եզրակացությունները: Այսպես, «Հայկական մարզի բնակիչների մասին» բաժնում Ի. Շուպենն այսպիսի տողեր ունի. «Դատելով... հայկական մարզում ապրող հայերի մարմնի կառուցվածքից, լեզվից, բարբերից և սովորություններից, որոնք իրենց հնարակ հայ են կոչում, չի կարելի եզրակացնել, թե նրանք իրականում ծագել են Հայկի սերնդից» (էջ 526): Իսկ հետո եզրակացնում է. «Ճշմարտությունն այն է, որ երկաթատու պատերազմների հետևանքով, որոնք ցնցել են Հայաստանը, նրա բոլոր հնարակները կամավոր կամ ստիպողաբար գաղթել են Վրաստան և Փոքր Հայք, իսկ այնուհետև Արևմուտք, իսկ մուսուլմանական լծի տակ մնացել են միայն ասորիների, միդիացիների և հատկապես հրեաների սեյունդները, որոնք ինչպես ցույց է տալիս պատմությունը, Բաբելոնի անկումից հետո զգալիորեն բազմացել են Հայաստանում և հետագայում ընդունել հայերի լեզուն և հավատը» (էջ 526): Կամ, ասենք, քրդե-

րի մասին Ի. Շոպենը գրում է. «Քրդերը հավանաբար կազմել են նախնադարյան հոտ, որոնց գտել է Հայկն իր գրաված տարածքներում: Նրանք հավանաբար միացել են եղել պարթևների հետ...» (էջ 526): Իսկ որպես սկզբնաղբյուր հեղինակը նշում է պարսկական ավանդությունը քրդերի մասին: Սակայն առավել հետաքրքրականը աշխատության երկրորդ գլուխն է, որտեղ ռուսական պաշտոնյան բնութագրում է հայկական մարզի բնակիչներին: Սկզբում Ի. Շոպենը հայերին գովաբանում է՝ գրելով, թե ուր էլ լինի հայը, նա խստորեն հետևում է նահապետական իր պատգամին, և աշխարհում ոչ մի բան չի կարող նրան ստիպել խուսափելու կրոնական իր պահից... հայերն իրենց միջոցները չեն խնայում եկեղեցիներ կառուցելու համար» (էջ 707): Այդքանից հետո, սակայն, Ի. Շոպենը գրում է. «Բարոյական տեսակետից հայերը ձեռք են բերել ոչ այնքան ազնիվի համբավ, խորամանկությունը կազմում է նրանց գերակշիռ մասի բնորոշ գիծը: Ընչաքաղցությունը հաճախ նրանց ներքաշում է խաբեության մեջ, այնպես որ շատերի համար խոսքի շնորհը վերածվում է իրենց մտքերը թաքցնելու արվեստի: Նրանք շուրջըր են, իրենց հավատարմության մեջ հաստատական չեն, և իրենց համար արդեն ոչ պետքական մարդը հեշտությանը մոռացվում է նրանց կողմից...» (էջ 707): Եվ այս ամենը ռուսական պաշտոնյան գրում է մի ժողովրդի մասին, որը հենց Ռուսաստանին նվիրվածության համար ենթարկվեց այդքան ճշմունքների ու հալածանքների: Իհարկե, կարելի էր և ուշադրություն չդարձնել Ի. Շոպենի այս գրառումներին, եթե հեղինակն այդպիսի առատ բարեմասնություններ չշռայլեր մարզում բնակվող մեկ այլ ժողովրդի մասին. խոսքը թուրքերի մասին է. «Թաթարները մարդամոտ են, երբեմն ճարտար իրենց խոսքերում, գրում է նա, - ճարպիկ են իրենց արտահայտություններում, խորաթափանց և միշտ որոշակի: Այս ժողովուրդը պահպանել է իր ազգայինը, նրանց մեջ կա հպարտություն և անկոտրում քաջություն: Թաթարները դեռևս հիշում են, որ իրենք Չինգիզ-խանի և Լենկ-Թեմուրի սերունդներն են...» (էջ 700): Փաստորեն Ի. Շոպենը հայերին դրվատում է միայն հետևյալ առումներով. «Պատերազմներում նրանք քաջ են և միայն ուժերի անհավասարությունը կարող է նրանց ստիպել զիջելու իրենց հարևաններին, որոնք այդքան հալածել ու տանջել են նրանց: Միմյանց նկատմամբ նրանք բավականին համերաշխ են, և եղբայրության ոգին նրանց մոտ տիրապետող է... Մտավոր առումով հայերը լիովին հավանալի են, նրանց համար լուսավորության օգտակարությունն ակնհայտ է, իսկ գիտությունը և արվեստները հասանելի են բոլոր առումներով: Այս տեսակետից նրանք բավական գերազանցում են իրենց հարևաններին... նրանք բուրդն էլ ոգևորված են իրենց երեխաներին կրթություն տալու ցանկությամբ» (էջ 707): Մեկ այլ տեղ, խոսելով հայերի ձեռներեցության մասին, Ի. Շոպենը գրում է. «Գործարարության տեսակետից հայերը քիչ մրցակիցներ ունեն: Նրանք ընդհանրապես համբերատար են, աշխատասեր, համարձակ, չափավոր են ժշատության աստիճանի հասնող և փայլուն ունակություններ ունեն հաջողության և անհաջողության հավանականությունը հաշվարկելու խնդրում...» (էջ 707):

Այս ամենից հետո, սակայն, բաժինը կրկին շարունակվում է շոպենյան նույն ոգով. «Հայերն ընդհանրապես այդքան դարերի ընթացքում, գտնվելով մուսուլմանական լծի քմահաճույքների տակ, - բացատրում է Շոպենը, կորցրել են ամեն տեսակ բնածին հատկանիշ. պահպանում են միայն անխոս և ստրկական ենթարկունը ուժին, բայց միշտ պատրաստ են անել իրենցը՝ երբ առավելության հույս է լինում...: Ընդհանուր առմամբ այստեղի հայերը փառասեր են, ինքնասեր, փնտրում են պատիվ և պարզևներ» (էջ 707): Վերջին հատվածում միայն Ի. Շոպենը բացատրում է իր այս բնութագրումների պատճառը: Պարզվում է, որ հայերը, այս բոլոր «ունակություններով» հանդերձ, արդեն պատմություն են և ռուսաց նոր տիրապետությունը «կվերցնի այս բացասական գծերը», և հայերը նորից կվերագտնեն իրենց կոչումը: Նրա կարծիքով մտնելով «Ռուսական տիրապետության մեջ և ընդունելով նրա հովանավորությունը, - գրում է Ի. Շոպենը, - նրա բնակիչների համար կբացվեն լուսավորության նոր օջախներ և կսակած չկա, որ բոլոր այս մութ գծերը կհարթվեն և հայերն իրենց մտավոր ունակություններով բարձր տեղերից մեկը կգրավեն իրենց նոր հայրենիքի զավակների շարքում» (էջ 708): Իհարկե, այլ բան չէր էլ կարելի սպասել Ի. Շոպենից. նա ընդամենը կատարել է Ի. Պասկևիչի պատվերը. «Երջանիկ իրադարձությունը, - ավարտում է գիրքը Ի. Շոպենը, - որ տարածեց ռուսական տիրապետությունը սինչև Արարատ լեռը, անշուշտ, կնոտեցնեն հայկական մարզի բնակիչներին նոր հասկացությունների և բարոյական աշխարհին... և հնարավոր է, որ հիսուն տարի էլ չանցած... Հայաստանի բնակիչները կարողավ այս գործը, կբացականչեն. ինչպե՞ս դա կարող էր պատահել և իրենց ջերմ աղոթքներում կօրհնեն ռուսական կայսրությանը, որն իրենց դուրս բերեց դարերի անշարժության խորխորատներից» (էջ 709):

Հայագիտական առումով որոշակի հետաքրքրություն ունի Ի. Շոպենի գրքի չորրորդ բաժինը՝ «Հնագիտական հայացք Հայաստանի այն մասի վրա, որը կազմում է ներկայիս Հայկական մարզը»: Հեղինակը մանրամասն տեղեկություններ է հաղորդում մարզի տարածքի, բնաշխարհի, վարչական բա-

ժամումների մասին, հանգամանորեն ներկայացնում է կարևորագույն պատմական վայրերը: Դրան գուրահեռ՝ Ի. Շոպենը տեղեկություններ է հաղորդում նաև պարսից տիրապետության շրջանի մահալների մասին: Ընդ որում, պարսկական տիրապետության մասին պատմող էջերում ընթերցողը գտնում է մինչ այդ քիչ հայտնի և ուշագրավ մանրամասներ: Հեղինակն առանձին ուշադրություն է նվիրում նաև հոգևոր կյանքի մանրամասներին և ժամանակագրական կարգով ներկայացնում է Հայոց Կաթողիկոսներին՝ Գրիգոր Լուսավորչից սկսած մինչև իր ժամանակները:

Աշխատության երկրորդ մասից սկսած Ի. Շոպենն անցնում է իր բուն շարադրանքին: Հեղինակը վիճակագրական մանրամասն տվյալներով ներկայացնում է Հայկական մարզը: Հետազոտողն այստեղ կարող է գտնել ցանկացած տեղեկություն, որը վերաբերում է մարզի աշխարհագրական տեսությանը՝ սահմաններին, տարածքին, լեռներին ու լեռնաշղթաներին, գետերին ու լճերին, հողի որակին, լեռնաշխարհի կլիմային: Աշխատությունում բավականին հանգամանորեն և մանրամասն տեղեկատվությամբ է ներկայացված նաև մարզի վարչական բաժանումները ինչպես պարսից, այնպես էլ ռուսական տիրապետության ժամանակներում: Առանձին ենթարժիններով այստեղ ներկայացված են մարզի բնակչության թիվը, զբաղմունքը, քաղաքներն ու գյուղերը, տեղի ժողովուրդների հավատը, մեկ առ մեկ թվարկված են մարզի տարածքում գտնվող վանքերն ու եկեղեցիները, նույնիսկ կա զինանշանի նկարագրությունը: Շոպենն այնուհետև անցել է հաղորդակցության ուղիներին, ճանապարհներին, կամուրջներին, փոստային կայարաններին և այլն:

Այս ամենը դեռ բոլորը չէ. սրանց հաջորդում են մարզի ուսումնական հաստատությունների, տղմտեսության ճյուղերի, կենդանական և բուսական աշխարհի, օգտակար հանածոների, ճարտարապետության, մշակույթի, ֆինանսական և հարկային համակարգի մասին մանրամասն տեղեկությունները: Փաստորեն ուսումնասիրողի տեսադաշտից չի վրիպել գրեթե ոչ մի բնագավառ, և այստեղ արդեն միանգամայն իրավացի է «Կավկազ» թերթը. «Վիճակագրությունը Շոպենի սիրած զբաղմունքն է, և հայկական մարզի նկարագրությունը ցույց է տալիս, որ նա այդ գործի վարպետն է: Դրվատելով Շոպենի գրքի այս մասը, բոլորը գտնում են, որ առանց այդ տեղեկությունների, հնարավոր չէ որևէ կառավարական միջոցառում ձեռնարկել Հայաստանի նկատմամբ»<sup>7</sup>: Այս առումով Ի. Շոպենն, անշուշտ, կատարել է հայագիտական կարևոր արժեք ներկայացնող հետազոտություն, որն ունի ինչպես տեղեկատվական, այնպես էլ հայրենագիտական նշանակություն:

Որքանով նկատում ենք, եթե Շոպենի այս աշխատությանը մոտենանք խիստ գիտականության տեսանկյունից, նրա շատ մտքեր, իրոք, անընդունելի են, սակայն ժամանակաշրջանի առումով դրանք, անշուշտ, հայագիտական որոշակի արժեք են ներկայացնում: (Չմոռանանք նաև, որ Շոպենի այս գրքի շատ հատվածներ տպագրվեցին ռուսական առաջատար պարբերականներում):

Իվան Շոպենը Կովկասին նվիրված ուրիշ աշխատություն էլ ունի՝ «Նոր նշումներ Կովկասի հին պատմության և նրանում բնակվողների մասին»: Գիրքը գրեթե դուրս է մնացել մեր պատմաբանների ուշադրությունից: Այն հրատարակվել է Պետերբուրգում 1866 թ., և ինչպես ինքն է գրում, «նշումներին» հեղինակը ձեռնամուխ է եղել՝ նպատակ ունենալով տեղեկություններ հավաքել Կովկասի հին շրջանի պատմության մասին. «Իմ նպատակն է եղել՝ գրում է Ի. Շոպենը, ուշադրություն հրավիրել Անդրկովկասի ժողովուրդների պատմության երեք հնագույն տարեգրությունների վրա, համեմատել դրանք, տարբերակել նրանց միջև եղած համամասնությունները՝ առանձնացնելով այն, թե որն է դրանցից ավելի հնարովի և մոտ մտացածին»<sup>8</sup>: Ինչպես նկատում ենք, Ի. Շոպենն իր վրա այնքան էլ դյուրին պարտականություն չի դրել: Գործն ինքնին պահանջում էր մասնագիտական խիստ պատրաստվածություն, որն, իհարկե, Ի. Շոպենը չուներ: Միաժամանակ պետք է նշել, որ հեղինակն անձամբ այն կարծիքին չէ, թե իր ձեռնարկած գիրքն անթերի է, որ ժամանակի ընթացքում «կհայտնաբերվեն նոր փաստեր, և ինքը շնորհակալությամբ կընդունի արված դիտողությունները՝ հաջորդ հրատարակության համար» (էջ 1): Այնուհանդերձ Ի. Շոպենը գրում է, որ իր ծրագրի իրականացման համար հարկավոր են եղել միմիայն փաստեր և «ջանացել է հեռանալ ամեն տեսակ դատարկախոսությունից» (էջ 2): Աշխատանքի ներածականում Ի. Շոպենը չի մոռանում նշել, որ իր նպատակն է եղել նաև «որևէ բանով օգտակար լինել կովկասագիտությանը» (էջ 2):

Միանգամից նշենք, որ Ի. Շոպենի հիշատակած երեք հնագույն տարեգրությունից առաջինը Մովսես Խորենացու «Հայոց պատմությունն» է, մյուսը՝ Մովսես Կաղանկատվացու «Աղվանից աշխարհի

<sup>7</sup> «Кавказ», 1853, N 10.

<sup>8</sup> И. И. Шопен, Новые заметки на древней истории Кавказа и его обитателей, СПб, 1866, էջ 1: Այսուհետև այս գրքից մեջբերումների հղումները տես շարադրանքում:

պատմությունը», իսկ երրորդը՝ վրացական «Վախթանգի պատմությունը»: Առաջինի մասին հեղինակը գովեստով է խոսում. «Մովսես Խորենացու պատմությունն ավելի ամբողջական է և ամենին բավարարող», - գրում է Ի. Շոպենը (էջ 2): Մովսես Կաղանկատվացու պատմության մասին Ի. Շոպենն ընդգծում է, որ «հեղինակի հաղորդած տեղեկությունները վերին աստիճանի հետաքրքիր են» (էջ 2): Երրորդ աղբյուրը Ի. Շոպենին այնքան էլ վստահություն չի ներշնչում. «Վախթանգի պատմության մասին նույնը չի կարելի ասել, ինչպես հայկականներին, - գրում է նա, - քանի որ այդ փաստաթղթի ընթերցումը համակեց ինձ բնորոշ թերահավատությանը» (էջ 2):

Ի. Շոպենի «Կովկասի հին պատմության նոր նշումների...» չորս զլուխներից առաջինը կրում է «Կովկաս» ընդհանուր վերնագիրը: Շոպենն այստեղ օգտվելով ամենատարբեր աղբյուրներից, հանգում է այն եզրակացության, որ «իրենց նշանակությամբ հին դարերում հիմնականում գոյատևել են երեք պետություններ՝ Վրաստանը, Հայաստանը կամ Արմենիան և Աղվանքը, իսկ միջին դարերում՝ Հայաստանը, Վրաստանը և մերձկասպյան մարզերը» (էջ 22): Մյուս երեք զլուխներն առանձին-առանձին նվիրված են Հայաստանի, Աղվանքի և Վրաստանի պատմությանը:

Աշխատանքի երկրորդ զլուխն ամբողջովին նվիրված է Հայոց պատմությանը: Բաժինը Ի. Շոպենն սկսել է ներածականով, որտեղ քննում է այն աղբյուրները, որոնք հինք են ծառայել բաժինը շարադրելու համար: Այստեղ ևս հեղինակը բարձր է գնահատում Խորենացու և Կաղանկատվացու պատմությունները և համեմատելով դրանք վրացական աղբյուրների հետ՝ նշում է, որ հայկական աղբյուրներն ավելի հավաստի են և ճշմարիտ. «Մովսես Խորենացու պատմությունը, - գրում է նա, - այնքանով է ճշմարիտ, որ նրանում հաղորդած տեղեկությունները հաստատվում են մյուս պատմիչների մոտ, բացառությամբ միայն ժամանակագրության» (էջ 25): Բաժնի ներածականում, սակայն, Ի. Շոպենը թույլ է տալիս կոպիտ սխալ. «... իրական, տեղաբնիկ հայերը, - գրում է նա, - հագիվ թե որևէ տեղ փրկվեին, բացի Փոքր Հայքից՝ Աև ծովի հարևանությամբ, Եփրատի և Արաքսի հովիտներում: Ավելի հարավային մարզերը, որը մեր կողմից Հայաստան է անվանվում, բնակեցված են եղել այլ ծագում ունեցող ժողովուրդներով և ազգերով» (էջ 26): Ի. Շոպենի այս սխալին հաջորդում են նաև մյուսները. հեղինակն առանց քննության ու հատուկ հետազոտության գրում է այն, ինչն իրեն ճշմարիտ է թվում: Այսպես, Շոպենը փորձ է անում յուրովի բացատրել հայ ժողովրդի կազմավորման հարցը: Նա գրում է, թե Մովսես Խորենացու գրքում ամեն տեղ հանդիպում է Հայք և Հայաստան, և խոսք անգամ չկա Արմենիայի մասին և «հետևաբար կարիք չկար որ թարգմանիչները Արմեններին հայկականներ անվանեին, քանի որ այս երկու ժողովուրդներն իրենց ծագումով և գիտակցական աստիճանով լիովին տարբերվում են միմյանցից» (էջ 35): Ավելին, Ի. Շոպենը, Խորենացուց քաղվածքներ բերելով, նրանց հետ վարվում է քսահաճորեն: Դա հատկապես ցայտուն է երևում պատմահոր աշխատությանը նվիրված ծանոթագրություններում (թվով 385): Հեղինակը դրանք տեղադրել է աշխատանքի վերջում: Գրքի այս բաժինն Ի. Շոպենն ուղղակի լցրել է գերազանցապես սխալ և անհիմն բացատրություններով: Ուղղակի պետք է արձանագրել, որ՝ Ի. Շոպենի այս գրքի հայագիտական արժեքն այն է, որ հեղինակը ներկայացրել է Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը» քաղվածքների տեսքով: Փաստորեն նա համառոտագրել է Խորենացու պատմությունը: Քաղվածքներն ավելի հստակեցնելու նպատակով Ի. Շոպենը դրանք ներկայացնում է ըստ Խորենացու առաջին, երկրորդ և երրորդ գրքերի: Մովսես Խորենացու առաջին գրքից Ի. Շոպենը կատարել է 32 քաղվածք, երկրորդ գրքից՝ 92: Ի. Շոպենը պատմահորից բերված քաղվածքները ընտրել է համառոտագրել է սեփական մեկնաբանություններով: Ուստի, մեջբերումներում ակնհայտ է հեղինակի կողմնակալությունը և բուն տեքստից հեռանալը: Ի. Շոպենն իր գրքում որոշակիորեն ընդգծել է միայն այն հատվածները, որն ինքն է անհրաժեշտ համարել: Խորենացու հաղորդած տեղեկությունները նա «համադրում է» ժամանակի մյուս աղբյուրների հետ և վերջում արդեն ընթերցողին է հրամցնում տեքստի համառոտ բովանդակությունն՝ արդեն իր մեկնաբանություններով: Ընդհանուր առմամբ, բացակայում է գիտականությունը, իսկ հաճախ էլ հեղինակը միտումնավոր վերաբերմունք է դրսևորում այս կամ այն հարցը քննելիս:

Այսպիսով, չնայած Ի. Շոպենի աշխատությունների հակասականությանը, այնուամենայնիվ մեծ տրևության արդյունք հանդիսացող նրա գիտական ժառանգությունը ժամանակին խթան է ծառայել հայագիտության զարգացմանը Ռուսաստանում, աղբյուրագիտական հիմք դարձել 19-րդ դարի Հայաստանի սոցիալ-տնտեսական հարցերի ուսումնասիրության համար:

**А. Ж. ОГАНЕСЯН- К вопросу об оценке трудов И. И. Шопена.**- После присоединения Восточной Армении к России русское правительство приступило к изучению истории, общественно-бытовых условий и обычаев Армянской области. Эти исследования, по сути являясь поручениями высших государственных чиновников, вместе с тем имели определенную политическую тенденцию, иногда с подчеркнутой подоплекой. Тем не менее, они имеют не только историографическое значение. К этим трудам, с некоторыми оговорками, можно причислить исследования И. Шопена.

Несмотря на имеющиеся противоречия в трудах Шопена, его историческое наследие в свое время послужило стимулом к развитию арменоведения в России, стало источниковедческой основой для изучения социально-экономических вопросов Армении XIX века.